

ԱՄՍ 800

ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ – ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԻՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Պարագրաֆ
Ներածություն	
Սույն ԱՄՍ-ի շրջանակները.....	1-3
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.....	4
Նպատակները.....	5
Սահմանումներ.....	6-7
Պահանջները	
Առողիտի առաջադրանքները ստանձնելիս հաշվի առնվող նկատառումները.....	8
Առողիտը պլանավորելիս և իրականացնելիս հաշվի առնվող նկատառումները.....	9-10
Առողիտորական կարծիքի ձևավորում և առողիտորական եզրակացության հետ կապված նկատառումներ.....	11-14
Կիրառումը և այլ բացատրական նյութեր	
Հատուկ նպատակի հիմունքի սահմանումը.....	Ա1-Ա4
Առողիտի առաջադրանքները ստանձնելիս հաշվի առնվող նկատառումները.....	Ա5-Ա8
Առողիտը պլանավորելիս և իրականացնելիս հաշվի առնվող նկատառումները.....	Ա9-Ա12
Առողիտորական կարծիքի ձևավորում և առողիտորական եզրակացության հետ	

կապված նկատառումներ..... Ա13-Ա15

Հավելված Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ
աուդիտորական եզրակացությունների ցուցադրական օրինակներ

<<Հատուկ նկատառումներ–հատուկ նպատակի հիմունքների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ>> աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 800-ը պետք է դիտարկել <<Անկախ աուդիտորի ընդհանուր նպատակները և աուդիտի իրականացումը՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների>> ԱՄՍ 200-ի հետ համատեղ:

Ներածություն

Սույն ԱՄՍ-ի շրջանակները

1. 100-ից 700 համարներում ներառված աուդիտի միջազգային ստանդարտները (ԱՄՍ-ներ) կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ: Սույն ստանդարտն անդրադառնում է հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում այդ ԱՄՍ-ների կիրառման հատուկ նկատառումներին:
2. Սույն ԱՄՍ-ն գրված է հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի համատեքստում: ԱՄՍ 805-ն¹ անդրադառնում է առանձին ֆինանսական հաշվետվության կամ ֆինանսական հաշվետվության առանձին տարրի, հաշվի կամ հոդվածի աուդիտին վերաբերող հատուկ նկատառումներին:
3. Սույն ստանդարտը չի անտեսում այլ ԱՄՍ-ների պահանջները, այն նաև չի հայտարարում, որ անդրադառնում է այն բոլոր հատուկ նկատառումներին, որոնք կարող են տեղին լինել աուդիտի առաջադրանքների պայմաններում:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը

4. Սույն ԱՄՍ-ն կիրառելի է 2009թ. դեկտեմբերի 15-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար:

Նպատակը

5. Հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում ԱՄՍ-ները կիրառելիս՝ աուդիտորի

¹ ԱՄՍ 805 <<Հատուկ նկատառումներ - առանձին ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվության առանձին տարրերի, հաշիվների կամ հոդվածների աուդիտ>> ստանդարտ:

նպատակն է պատշաճ ձևով անդրադառնալ հատուկ նկատառումներին, որոնք վերաբերում են.

(ա) աուդիտի առաջադրանքների ստանձմանը,

(բ) այդ առաջադրանքների պլանավորմանը և իրականացմանը, և

(գ) կարծիքի ձևավորմանը և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացմանը:

Սահմանումներ

ԱՄՍ-ների նպատակներով, ստորև նշված տերմիններն ունեն հետևյալ իմաստները՝

(ա) հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ՝ հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններ, (հղում՝ պար. Ա4),

(բ) հատուկ նպատակի հիմունք՝ առանձին օգտագործողների ֆինանսական տեղեկատվության կարիքները բավարարելու նպատակով կազմված ֆինանսական հաշվետվության հիմունք: Ֆինանսական հաշվետվության հիմունքը կարող է լինել ճշմարիտ ներկայացման հիմունք կամ համապատասխանության հիմունք²:

6. Սույն ստանդարտում օգտագործված «ֆինանսական հաշվետվություններ» տերմինը նշանակում է «հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, ներառյալ՝ կից ծանոթագրությունները»:³ Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները սովորաբար ներառում են հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականության սեղմ բնութագիրը և բացատրական այլ տեղեկատվություն: Ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքի պահանջները որոշում են ֆինանսական հաշվետվությունների ձևը և բովանդակությունը և այն, թե ինչն է կազմում ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը:

Պահանջները

Աուդիտի առաջադրանքները ստանձնելիս հաշվի առնվող նկատառումներ

Ֆինանսական հաշվետվության հիմունքի կիրառելիությունը

7. ԱՄՍ 210-ն աուդիտորից պահանջում է որոշել ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված ֆինանսական հաշվետվության հիմունքի կիրառելիությունը³: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն-

² ԱՄՍ 200 «Անկախ աուդիտորի համընդհանուր նպատակները և աուդիտի իրականացումը՝ համաձայն աուդիտի միջազգային ստանդարտների», ստանդարտ, պարագրաֆ 13 (ա):

³ ԱՄՍ 210 «Աուդիտորական առաջադրանքի պայմանների համաձայնեցումը» ստանդարտը, պարագրաֆ 6(ա):

ների աուդիտի ընթացքում, աուդիտորը պետք է ստանա տեղեկատվություն ստորև նշվածների վերաբերյալ (հղում՝ պար. Ա5-Ա8).

- (ա) ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակը,
- (բ) ֆինանսական հաշվետվությունների նախատեսվող օգտագործողները,
- (գ) ղեկավարության կողմից իրականացրած քայլերը՝ որոշելու, որ ֆինանսական հաշվետվության կիրառելի հիմունքը ընդունելի է տվյալ պայմաններում:

Աուդիտը պլանավորելիս և իրականացնելիս հաշվի առնվող նկատառումներ

8. ԱՄՄ 200-ը աուդիտորից պահանջում է համապատասխանել աուդիտին առնչվող բոլոր ԱՄՄ-ներին⁴: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պլանավորելիս և իրականացնելիս, աուդիտորը պետք է որոշի, թե արդյոք աուդիտի առաջադրանքների պայմաններում ԱՄՄ-ների կիրառումը պահանջում է հատուկ նկատառումներ, թե ոչ (հղում՝ պար. Ա9-Ա12):
9. ԱՄՄ 315-ն աուդիտորից պահանջում է հասկանալ կազմակերպության կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը⁵: Եթե ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են որևէ պայմանագրի դրույթների համաձայն, ապա աուդիտորը պետք է հասկանա պայմանագրի բոլոր նշանակալի մեկնաբանությունները որոնք կատարվել են ղեկավարության կողմից այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Մեկնաբանությունը նշանակալի է, երբ մեկ այլ խելամիտ մեկնաբանության ընդունումը ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունում կառաջացներ էական տարբերություն:

Կարծիքի ձևավորում և աուդիտորական եզրակացության հետ կապված նկատառումներ

10. Կարծիք ձևավորելիս և հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն ներկայացնելիս, աուդիտորը պետք է կիրառի ԱՄՄ 700-ի պահանջերը (հղում՝ պար. Ա13)⁶:

Ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքի/հիմունքի նկարագրությունը

11. ԱՄՄ 700-ն աուդիտորից պահանջում է գնահատել, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատշաճ ձևով (բավականաչափ) նկարագրում են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքը⁷: Եթե ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պայմանագրի դրույթների համաձայն, ապա աուդիտորը պետք է գնահատի, թե արդյոք ֆինանսական

⁴ ԱՄՄ 200, պարագրաֆ 18:

⁵ ԱՄՄ 315 <<Էական խեղաթյուրումների ռիսկերի հայտնաբերումն ու գնահատումը՝ կազմակերպության և դրա միջավայրի վերաբերյալ պատկերացումների միջոցով>> ստանդարտ:

⁶ ԱՄՄ 700 <<Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի ձևավորում և ներկայացում>> ստանդարտ:

⁷ ԱՄՄ 700, պարագրաֆ 15:

հաշվետվությունները պատշաճ ձևով նկարագրում են պայմանագրի այն բոլոր նշանակալի մեկնաբանությունները, որոնց վրա հիմնված են ֆինանսական հաշվետվությունները:

12. ԱՄՄ 700-ն անդրադառնում է աուդիտորական եզրակացության ձևին և բովանդակությանը: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը՝

(ա) պետք է նաև ներկայացնի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակը և, անհրաժեշտության դեպքում, նախատեսվող օգտագործողներին, կամ պետք է հղում կատարի հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններին, որտեղ պարունակվում է այդ տեղեկատվությունը, և

(բ) եթե ղեկավարությունը նման ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ունի ֆինանսական հաշվետվության հիմունքների ընտրության հնարավորություն, ապա ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվության բացատրությունը⁸ պետք է անդրադառնա նաև տվյալ պայմաններում ֆինանսական կիրառելի հիմունքի ընդունելի լինելու ղեկավարության որոշման նկատմամբ վերջինիս պատասխանատվությանը:

Ծանուցում ընթերցողներին առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հատուկ նպատակի հիմունքի համաձայն

13. Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը պետք է ներառի «Հանգամանքները լուսաբանող» պարագրաֆ՝ ծանուցելու աուդիտորական եզրակացությունը օգտագործողներին, որ ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հատուկ նպատակի հիմունքի համաձայն, ուստի չեն կարող կիրառելի լինել մեկ այլ նպատակով: Այդ պարագրաֆը աուդիտորը պետք ներկայացնի համապատասխան վերնագրի տակ (հղում՝ պար. Ա14-Ա15):

Կիրառումը և այլ բացատրական նյութեր

Հատուկ նպատակի հիմունքի սահմանում (հղում՝ պար. 6)

Ա1. Հատուկ նպատակի հիմունքների օրինակներ են՝

- ֆինանսական հաշվետվությունների փաթեթի գծով հաշվապահական հաշվառման հարկային հիմունքը, որի հիման վրա ներկայացվում է կազմակերպության հարկային հայտարարագիրը,
- կազմակերպության դրամական միջոցների հոսքերի տեղեկատվության գծով հաշվապահական հաշվառման

⁸ Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

դրամարկղային հիմունքը (դրամական միջոցների մուտքեր և ելքեր), որը կազմակերպությունից կարող է պահանջվել պատրաստել իր կրեդիտորների համար,

- կարգավորող մարմնի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության դրույթները՝ այդ կարգավորող մարմնի պահանջերին բավարարելու համար, կամ
- պայմանագրի ֆինանսական հաշվետվության դրույթները, ինչպիսին է պարտատոմսերի բացթողումը, վարկային պայմանագիրը կամ ծրագրին տրամադրվող դրամաշնորհը:

Ա2. Կարող են լինել հանգամանքներ, երբ հատուկ նպատակի հիմունքը հիմնված է ստանդարտներ մշակող իրավասու կամ ճանաչված կազմակերպության, կամ էլ օրենսդրության կամ կարգավորող նորմի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության հիմունքի վրա, որը սակայն չի համապատասխանում այդ հիմունքի բոլոր պահանջներին: Նշվածի օրինակ է պայմանագիրը, որը պահանջում է, որ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվեն X իրավահամակարգի հիմնական, սակայն ոչ բոլոր Ֆինանսական հաշվետվության ստանդարտների համաձայն: Երբ նշվածն ընդունելի է աուդիտի առաջադրանքների պայմաններում, ապա հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններում տեղին չէ ստանդարտներ մշակող իրավասու կամ ճանաչված մարմնի, կամ էլ օրենսդրության կամ կարգավորող նորմի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության հիմունքին ամբողջությամբ համապատասխանելու ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքի նկարագրությունը: Վերը նշված պայմանագրի օրինակում, ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքի նկարագրությունը կարող է վկայակոչել որևէ պայմանագրի ֆինանսական հաշվետվության դրույթներին, այլ ոչ X իրավահամակարգի Ֆինանսական հաշվետվության ստանդարտներին:

Ա3. Ա2 պարագրաֆում նկարագրված հանգամանքներում, հատուկ նպատակի հիմունքը կարող է չլինել ճշմարիտ ներկայացման հիմունք, նույնիսկ, եթե այն ֆինանսական հաշվետվության հիմունքը, որի վրա հիմնված է հատուկ նպատակի հիմունքը ճշմարիտ ներկայացման հիմունք է: Նշվածը բացատրվում է նրանով, որ հատուկ նպատակի հիմունքը կարող է չհամապատասխանել ստանդարտներ մշակող իրավասու կամ ճանաչված մարմնի, կամ էլ օրենսդրության կամ կարգավորող նորմի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության հիմունքի բոլոր պահանջներին, որոնք անհրաժեշտ են ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացմանը հասնելու համար:

Ա4. Հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել կազմակերպության կողմից պատրաստվող միակ ֆինանսական հաշվետվությունները: Նման հանգամանքներում, այդ ֆինանսական հաշվետվությունները բացի նրանցից, որոնց համար նախատեսված է ֆինանսական հաշվետվության հիմունքը, կարող են օգտագործվել նաև այլ օգտագործողների կողմից: Չնայած այդ հանգամանքներում ֆինանսական

հաշվետվությունների լայն տարածմանը, ԱՄՄ-ների նպատակներով ֆինանսական հաշվետվությունները դեռևս համարվում են հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններ: 13-14 պարագրաֆներում ներկայացված պահանջները նախատեսված են խուսափելու ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակի շուրջ ծագող թյուրիմացություններից:

Առողիտի առաջադրանքները ստանձնելիս հաշվի առնվող նկատառումներ

Ֆինանսական հաշվետվության հիմունքի ընդունումը (հղում՝ պար. 8)

- Ա5. Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների դեպքում, նախատեսվող օգտագործողների ֆինանսական տեղեկատվության կարիքները հանդիսանում են առանցքային գործոն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կիրառվող ֆինանսական հաշվետվության հիմունքի ընդունելի լինելը որոշելիս:
- Ա6. Ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքը կարող է ներառել ֆինանսական հաշվետվության ստանդարտներ սահմանված այն կազմակերպության կողմից, որն իրավասու է կամ ճանաչված է հրապարակել ստանդարտներ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար: Այդ դեպքում, այդ ստանդարտները կհամարվեն ընդունելի նշված նպատակի համար, եթե նշված կազմակերպությունը հետևում է այն սահմանված և թափանցիկ գործընթացին, որի ընթացքում ուսումնասիրվում և հաշվի են առնվում համապատասխան շահառուների տեսակետները: Որոշ իրավահամակարգերում, օրենսդրությամբ կամ կարգավորող նորմով կարող է սահմանվել ֆինանսական հաշվետվության հիմունքը, որը պետք է օգտագործվի ղեկավարության կողմից որոշակի տեսակի կազմակերպության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Օրինակ, կարգավորող մարմինը կարող է սահմանել ֆինանսական հաշվետվության դրույթներ այդ կարգավորող մարմնի պահանջները բավարարելու համար: Հակառակ հայտանիշների բացակայության դեպքում, նման հաշվետվության հիմունքը այդպիսի կազմակերպության կողմից պատրաստվող հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար համարվում է ընդունելի:
- Ա7. Եթե Ա6 պարագրաֆում նշված ֆինանսական հաշվետվության ստանդարտները համալրվում են օրենսդրական կամ կարգավորող պահանջներով, ապա ԱՄՄ 210 ստանդարտով առողիտորից պահանջվում է որոշել, թե արդյոք առկա է որևէ հակասություն ֆինանսական հաշվետվության ստանդարտների և գոյություն ունեցող լրացուցիչ պահանջների միջև և սահմանում է այն միջոցառումները,

որոնք պետք է իրականացվեն աուդիտորի կողմից նման հակասության առկայության դեպքում⁹:

Ա8. Ի լրումն Ա6 և Ա7 պարագրաֆներում նկարագրվածների, Ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքը կարող է ներառել որևէ պայմանագրի կամ աղբյուրների ֆինանսական հաշվետվության դրույթներ: Այդ դեպքում, աուդիտի առաջադրանքների պայմաններում ֆինանսական հաշվետվության հիմունքի ընդունելի լինելը որոշվում է դիտարկելով, թե արդյոք նշված հիմունքը ցուցադրում է այնպիսի հատկանիշներ, որոնք սովորաբար ցուցադրվում են ֆինանսական հաշվետվության ընդունելի հիմունքներով՝ ինչպես նկարագրված է ԱՄՄ 210-ի հավելված 2-ում: Հատուկ նպատակի հիմունքի դեպքում, ֆինանսական հաշվետվության ընդունելի հիմունքների համաձայն սովորաբար ցուցադրվող հատկանիշներից յուրաքանչյուրի առանձին ներգրավվածության համապատասխան (հարաբերական) կարևորությունը մասնագիտական դատողության խնդիր է: Օրինակ, կազմակերպության զուտ ակտիվների արժեքը դրա իրացման ամսաթվի դրությամբ որոշելու նպատակով, վաճառողը և գնորդը կարող են համաձայնել, որ իրենց կարիքները բավարարելու համար տեղին կլինի կատարել չհավաքագրվող դեբիտորական պարտքերի պահուստաֆոնդի չափազանց զգուշավոր (հաշվենկատ) գնահատական, նունիսկ եթե նման ֆինանսական տեղեկատվությունը ընդհանուր նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսան տեղեկատվության նկատմամբ չեզոք չէ:

Աուդիտը պլանավորելիս և իրականացնելիս հաշվի առնվող նկատառումներ (հղում՝ պար. 9)

Ա9. ԱՄՄ 200-ն աուդիտորից պահանջում է համապատասխանել՝ ա) վարքագծի համապատասխան պահանջներին, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առաջադրանքների անկախությանը, և բ) աուդիտին վերաբերող բոլոր ԱՄՄ-ներին: ԱՄՄ 200-ը նաև աուդիտորից պահանջում է համապատասխանել բոլոր ԱՄՄ-ների բոլոր պահանջներին, բացառությամբ, եթե աուդիտի պայմաններում, մի որևէ ստանդարտ ամբողջությամբ տեղին չէ կամ այդ ստանդարտի որևէ պահանջ պայմանականություն պարունակելու պատճառով տեղին չէ և այդ պայմանը գոյություն չունի: Բացառիկ հանգամանքներում, աուդիտորը կարող է անհրաժեշտ համարել չկիրառել որևէ ԱՄՄ-ի համապատասխան պահանջը՝ իրականացնելով աուդիտի այլընտրանքային ընթացակարգեր այդ նույն պահանջի նպատակին հասնելու համար¹⁰:

Ա10. Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում ԱՄՄ-ների որոշ պահանջների կիրառումը կարող է աուդիտորից պահանջել

⁹ ԱՄՄ 210, պարագրաֆ 18.

¹⁰ ԱՄՄ 200, պարագրաֆներ 14, 18 և 22-23:

հատուկ նկատառումների կիրառում: Օրինակ՝ ԱՄՄ 320-ում ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար էական համարվող խնդիրների շուրջ դատողությունները հաշվի են առնում այդ օգտագործողների՝ որպես մեկ խմբի, ընդհանուր ֆինանսական տեղեկատվության կարիքները¹¹: Մինչդեռ, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների դեպքում, այդ դատողությունները հաշվի են առնում նախատեսվող օգտագործողների ֆինանսական տեղեկատվության կարիքները:

Ա11. Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների դեպքում, ինչպիսին են որևէ պայմանագրի պահանջների համաձայն պատրաստվող հաշվետվությունները, ղեկավարությունը նախատեսվող օգտագործողների հետ կարող է համաձայնել այն շեմի (սահմանի) շուրջ, որից ներքև աուդիտի ընթացքում բացահայտված խեղաթյուրումները չեն ուղղվելու կամ այլ կերպ ճշգրտվելու: Նման շեմի առկայությունը, հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը պլանավորելիս և իրականացնելիս, աուդիտորին չի ազատում ԱՄՄ 320-ի համաձայն էականությունը որոշելու պահանջից:

Ա12. ԱՄՄ-ների համաձայն, հաղորդակցությունը կառավարման օղակներում ընդգրկված անձանց հետ հիմնված է այդ անձանց և աուդիտի ենթակա ֆինանսական հաշվետվությունների կապի վրա, մասնավորապես՝ արդյոք այդ անձինք պատասխանատու են այդ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը վերահսկելու համար, թե ոչ: Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների դեպքում, կառավարման օղակներում ընդգրկված անձինք կարող է չունենան նման պատասխանատվություն. օրինակ՝ այն ֆինանսական տեղեկատվության դեպքում, որը պատրաստվում է բացառապես ղեկավարության օգտագործման համար: Նման դեպքերում, ԱՄՄ 260-ը¹² հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար կարող է տեղին չլինել, բացառությամբ, երբ աուդիտորը պատասխանատու է նաև կազմակերպության ընդհանուր նպատակներին ծառայող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար, կամ կազմակերպության կառավարող օղակներում գտնվող անձանց հետ համաձայնել է վերջիններիս տեղեկացնել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում հատկորոշված համապատասխան խնդիրները:

Կարծիքի ձևավորում և աուդիտորական եզրակացության հետ կապված նկատառումներ (հղում՝ պար. 11)

Ա13. Սույն ստանդարտի հավելվածը պարունակում է աուդիտորական եզրակացությունների ցուցադրական օրինակներ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար:

¹¹ ԱՄՄ 320 <<էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացքում>> ստանդարտ, պարագրաֆ 2.

¹² ԱՄՄ 260 <<Հաղորդակցությունը կառավարման օղակներում գտնվող անձանց հետ>> ստանդարտ:

Ծանուցում ընթերցողներին, առ այն որ ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են հատուկ նպատակի հիմունքի համաձայն (հղում՝ պար. 14)

Ա14. Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները կարող են օգտագործվել այլ նպատակներով, այլ ոչ այն նպատակներով, որոնց համար դրանք նախատեսված են եղել: Օրինակ, կարգավորող մարմինը որոշ կազմակերպություններից կարող է պահանջել հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություններում մեծ տեղ հատկացնել հանրային տեղեկատվությանը: Թյուրիմացություններից խուսափելու նպատակով, աուդիտորն իր եզրակացության օգտագործողներին տեղեկացնում է, որ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հատուկ նպատակի հիմունքի համաձայն, հետևաբար չեն կարող հարմար լինել մեկ այլ նպատակի համար:

Բաշխման կամ օգտագործման սահմանափակում (հղում՝ պար. 14)

Ա15. Ի լրումն պարագրաֆ 14-ով պահանջվող ծանուցմանը, աուդիտորը կարող է հարմար գտնել նշելու, որ աուդիտորական եզրակացությունը նախատեսված է բացառապես առանձին օգտագործողների համար: Հաշվի առնելով առանձին իրավահամակարգի օրենսդրությունը կամ կարգավորող նորմերը, նշվածին կարելի է հասնել աուդիտորական եզրակացության բաշխումը կամ օգտագործումը սահմանափակելու միջոցով: Նման դեպքերում պարագրաֆ 14-ը կարող է ընդարձակվել ներառելու նշված այլ խնդիրները՝ համապատասխանաբար փոփոխելով նաև վերնագիրը:

Հավելված (հղում՝ պար. Ա13) Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական զեզրակացության ցուցադրական օրինակներ

- Ցուցադրական օրինակ 1. Աուդիտորական եզրակացություն՝ պայմանագրի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի վերաբերյալ (սույն օրինակի նպատակներով՝ համապատասխանության հիմունք):
- Ցուցադրական օրինակ 2. Աուդիտորական եզրակացություն՝ X իրավահամակարգում հաշվապահական հաշվառման հարկային հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի վերաբերյալ (սույն օրինակի նպատակներով՝ համապատասխանության հիմունք):
- Ցուցադրական օրինակ 3. Աուդիտորական եզրակացություն՝ կարգավորող մարմնի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի վերաբերյալ (սույն օրինակի նպատակներով՝ ճշմարիտ ներկայացման հիմունք):

Ցուցադրական օրինակ 1.

Պայմանները ներառում են հետևյալը՝

- **Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են կազմակերպության ղեկավարության կողմից՝ պայմանագրի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն (այսինքն՝ հատուկ նպատակի հիմունք)՝ պայմանագրի դրույթներին համապատասխանելու համար: Ղեկավարությունը չունի ֆինանսական հաշվետվության հիմունքներ ընտրելու հնարավորություն,**
- **Ֆինանսական հաշվետվության կիրառելի հիմունքը/շրջանակը հանդիսանում է համապատասխանության հիմունք,**
- **աուդիտի առաջադրանքների ժամկետներն արտացոլում են ԱՄՄ 210 ստանդարտի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվության նկարագրությունը,**
- **աուդիտորական եզրակացության բաշխումը և օգտագործումը սահմանափակ է:**

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[Համապատասխան հասցեատերը]

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱԲԳ ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունն այդ թվականի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականության սեղմ բնութագիրը և բացատրական այլ նյութեր: Նշված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ԱԲԳ ընկերության ղեկավարության կողմից՝ ԱԲԳ ընկերության և ԴԵԶ ընկերության միջև 20X1 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրի Զ բաժնի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն (այսուհետ՝ «Պայմանագիր»):

Ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության¹³ պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է Պայմանագրի Զ բաժնի ֆինանսական դրույթների համաձայն վերը նշված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ:

Աուդիտորի պատասխանատվությունը

¹³ Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած աուդիտի վրա, արտահայտել կարծիք վերը նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան, համաձայն որոնց մենք պետք է համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերի գնահատումը, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նկատմամբ ներքին վերահսկողությունը՝ աուդիտի այն ընթացակարգերը կազմելու համար, որոնք տեղին են տվյալ պայմաններում, սակայն ոչ ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է ղեկավարության կողմից կիրառած հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, վերջինիս կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների խելամիտ լինելու, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և տեղին հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունը ներկայացնելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ԱԲԳ ընկերության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են Պայմանագրի Զ բաժնի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն:

Հաշվապահական հաշվառման հիմունքը և բաշխման և օգտագործման սահմանափակումը

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում ֆինանսական հաշվետվություններին կից X Ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու ԱԲԳ ընկերությանը՝ վերը նշված Պայմանագրի ֆինանսական հաշվետվության դրույթներին համապատասխանելու համար: Ուստի,

Ֆինանսական հաշվետվությունները հարմար չեն (չեն կարող) կիրառվելու այլ նպատակով: Մեր եզրակացությունը նախատեսված է բացառապես ԱԲԳ ընկերության և ԴԵԶ ընկերության համար, և բացի նշված ընկերություններից, այն չպետք է բաշխվի կամ օգտագործվի այլ կողմերի կողմից:

[Աուդիտորի ստորագրությունը]

[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]

[Աուդիտորի հասցեն]

Ցուցադրական օրինակ 2.

Պայմանները ներառում են հետևյալը՝

- **Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ընկերակցության ղեկավարության կողմից՝ X իրավահամակարգի հաշվապահական հաշվառման հարկային հիմունքի համաձայն (այսինքն՝ հատուկ նպատակի հիմունք)՝ օժանդակելու ղեկավարներին պատրաստել իրենց եկամտահարկի անհատական հայտարարագրերը: Ղեկավարությունը չունի ֆինանսական հաշվետվության հիմունքներ ընտրելու հնարավորություն,**
- **Ֆինանսական հաշվետվության կիրառելի հիմունքը/շրջանակը հանդիսանում է համապատասխանության հիմունք,**
- **աուդիտի առաջադրանքների ժամկետներն արտացոլում են ԱՄՍ 210-ի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվության նկարագրությունը,**
- **աուդիտորական եզրակացության բաշխումը սահմանափակ է:**

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

[Համապատասխան հասցեատերը]

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱԲԳ ընկերակցության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունն այդ թվականի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականության սեղմ բնութագիրը և բացատրական այլ նյութեր: Նշված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ԱԲԳ ընկերակցության ղեկավարության կողմից՝ կիրառելով X իրավահամակարգի հաշվապահական հաշվառման հարկային հիմունքը:

Ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության¹⁴ պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է X իրավահամակարգի հաշվապահական հաշվառման հարկային հիմունքի համաձայն վերը նշված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած աուդիտի վրա, արտահայտել կարծիք վերը նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան, համաձայն որոնց մենք պետք է համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից գերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտի ապացույցներ ձեռք բերելու նպատակով աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերի գնահատումը, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում ընկերակցության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նկատմամբ ներքին վերահսկողությունը՝ աուդիտի այն ընթացակարգերը կազմելու համար, որոնք տեղին են տվյալ պայմաններում, սակայն ոչ ընկերակցության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է ղեկավարության կողմից կիրառած հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, վերջինիս կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների խելամիտ լինելու, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և տեղին հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունը ներկայացնելու համար:

¹⁴ Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

Եզրակացություն

Մեր կարծիքով, 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ԱԲԳ ընկերակցության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պատրաստված են X իրավահամակարգի հաշվապահական հաշվառման հարկային հիմունքի համաձայն [նկարագրեք եկամտահարկի մասին կիրառվող օրենքը]:

Հաշվապահական հաշվառման հիմունքը և բաշխման սահմանափակումը

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում ֆինանսական հաշվետվություններին կից X ծանոթագրությանը, որի մեջ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու ԱԲԳ ընկերակցության ղեկավարներին՝ իրենց եկամտահարկի անհատական հայտարարագրերը պատրաստելու համար: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակներով: Մեր եզրակացությունը նախատեսված է բացառապես ԱԲԳ ընկերակցության և նրա ղեկավարների համար և, բացի նշված ընկերակցությունից և նրա ղեկավարներից, չպետք է բաշխվի այլ ամձանց կամ օգտագործվի նրանց կողմից:

[Աուդիտորի ստորագրությունը]

[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]

[Աուդիտորի հասցեն]

Ցուցադրական օրինակ 3.

Պայմանները ներառում են հետևյալը՝

- ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են կազմակերպության ղեկավարության կողմից՝ կարգավորող մարմնի կողմից սահմանված ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն (այսինքն՝ հատուկ նպատակի հիմունք)՝ այդ կարգավորող մարմնի պահանջներին համապատասխանելու համար: Ղեկավարությունը չունի ֆինանսական հաշվետվության հիմունքներ ընտրելու հնարավորություն,
- ֆինանսական հաշվետվության կիրառելի հիմունքը/շրջանակը հանդիսանում է ճշմարիտ ներկայացման հիմունք,
- աուդիտի առաջադրանքների ժամկետներն արտացոլում են ԱՄՄ 210-ի ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվության նկարագրությունը,
- աուդիտորական եզրակացության բաշխումը և օգտագործումը սահմանափակ չէ,
- <<Այլ խնդիրներ>> պարագրաֆը վերաբերում է միևնույն ժամանակաշրջանի համար ԱԲԳ ընկերության կողմից ընդհանուր նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների աուդիտորի կողմից հրապարակված աուդիտորական եզրակացությանը:

[Համապատասխան հասցեատերը]

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱԲԳ ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունն այդ թվականի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականության սեղմ բնութագիրը և բացատրական այլ նյութեր: Նշված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ԱԲԳ ընկերության ղեկավարության կողմից՝ Ձ կարգավորող նորմի Ֆ Բաժնի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն:

**Ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության¹⁵
պատասխանատվությունը**

Ղեկավարությունը պատասխանատու է Ձ կարգավորող նորմի Ֆ Բաժնի ֆինանսական դրույթների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար¹⁶, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համար, որը ղեկավարության որոշմամբ անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը հնարավոր դարձնելու համար, որոնք գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած աուդիտի վրա, արտահայտել կարծիք վերը նշված ֆինանսական հաշվետվությունների մասին: Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան, համաձայն որոնց պետք է համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից գերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտի ապացույցներ ձեռք բերելու նպատակով աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունների էական

¹⁵ Կամ այլ տերմին, որը տեղին է առանձին իրավահամակարգի օրենսդրական դաշտի համատեքստում:

¹⁶ Եթե ղեկավարությունը պատասխանատու է պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք տալիս են ընկերության ճշմարիտ և իրական պատկերը, ապա այդ պարագրաֆը կարող է ընթերցվել հետևյալ կերպ. <<Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ընկերության ճշմարիտ և իրական պատկերը՝ Ձ կարգավորող նորմի Ֆ Բաժնի ֆինանսական հաշվետվության դրույթների համաձայն, ինչպես նաև.....>>

խեղաթուրման ռիսկերի գնահատումը, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման¹⁷ նկատմամբ ներքին վերահսկողությունը՝ աուդիտի այն ընթացակարգերը կազմելու համար, որոնք տեղին են տվյալ պայմաններում, սակայն ոչ ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով¹⁸: Աուդիտը նաև ներառում է ղեկավարության կողմից կիրառած հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, վերջինիս կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների խելամիտ լինելու, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և տեղին հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունը ներկայացնելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում (կամ տալիս են ճշմարիտ և իրական պատկերը) ԱԲԳ ընկերության ֆինանսական վիճակը՝ 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համապատասխանելով Ձ կարգավորող նորմի Ֆ Բաժնի ֆինանսական հաշվետվության դրույթներին:

Հաշվապահական հաշվառման հիմունքը

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում ֆինանսական հաշվետվություններին կից X Ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու ԱԲԳ ընկերությանը՝ համապատասխանելու ԴԵԶ

¹⁷ 16-րդ ծանուցման դեպքում, այդ հատվածը կարող է ընթերցվել հետևյալ կերպ. «<Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նկատմամբ ներքին վերահսկողությունը, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր աուդիտի ընթացակարգերը կազմելու այնպես, որ տեղին լինեն տվյալ պայմաններում, սակայն ոչ կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով>>»:

¹⁸ Այն դեպքում, երբ աուդիտորը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ միասին արտահայտել նաև իր կարծիքը ներքին վերահսկողության արդյունավետության մասին, ապա այդ նախադասությունը կշարադրվեր հետևյալ կերպ. «<Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ իրականացման նկատմամբ ներքին վերահսկողությունը՝ աուդիտի ընթացակարգերը կազմելու այնպես, որոնք տեղին կլինեն տվյալ պայմաններում>>»: 16-րդ ծանուցման դեպքում, նշվածը կարող է ընթերցվել. «<Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը հաշվի է առնում ընկերության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ներքին վերահսկողությունը, որոնք տալիս են ընկերության ճշմարիտ և իրական պատկերը՝ աուդիտի ընթացակարգերը կազմելու այնպես, որ տեղին լինեն տվյալ պայմաններում>>»:

կարգավորողի պահանջներին: Ուստի, ֆինանսական հաշվետվությունները հարմար չեն կիրառվելու այլ նպատակով:

Այլ խնդիրներ

ԱԲԳ ընկերությունը պատրաստել է 20X1 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների առանձին փաթեթ՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, որոնց հիման վրա մենք ԱԲԳ ընկերության բաժնետերերի համար 20X2 թվականի մարտի 31-ին հրապարակել ենք առանձին աուդիտորական եզրակացություն:

[Աուդիտորի ստորագրությունը]

[Աուդիտորական եզրակացության ամսաթիվը]

[Աուդիտորի հասցեն]